# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ու Մ

<< 23 >> հուլիսի 2020թ. N ՄՊ/329-

ք. Արմավիր

**<<ԱԿՆԱԼՃԻ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2020 թվականի հուլիսի 20-ի N ՄՊ/319-2020 և 2020 թվականի հուլիսի 21-ի N ՄՊ/320-2020 որոշումները, <<Ակնալճի Ա. Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում փաստաթղթերի հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

**որոշում եմ՝**

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Ն. Սարգսյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել <<Ակնալճի Ա. Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Ամալյա Կնյազյանին (համաձայնությամբ):
3. Հանձնաժողովին (Ն. Սարգսյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել հինգ աշխատանքային օրվա ընթացքում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետ Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

*ՄԱՐԶՊԵՏ՝* *Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ*

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 23.07.2020 17:21:29 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի

մարզպետի 2020 թվականի հուլիսի 23-ի

ՏՊ/1329-Ա-2020 որոշման

# ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

**Հանձնաժողովի նախագահ՝**

Ն. Սարգսյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ

**Անդամներ՝**

Ս. Սաֆարյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի ավագ մասնագետ

Գ. Գևորգյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի ավագ մասնագետ

**Հանձնող՝**

Արմենուհի Հայրումյան - <<Ակնալճի Ա. Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի նախկին պաշտոնակատար

**Ընդունող՝**

Վարդիթեր Վարդերեսյան - <<Ակնալճի Ա. Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ